ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
**MINISTER OF JUSTICE OF THE REPUBLIC OF ARMENIA**

*ք. Երևան Հալաբյան 41/Ա*
*Հեռ.* **380 386**

«26» «02» » 2010 թ. N 6956

**Հայաստանի Հանրապետության**
**առողջապահության նախարար**
**Պարոն Հ. Քուշկյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2010թ. փետրվարի 22-ի 02/10.1/1631-10 հանձնարարականի**

Հարգելի պարոն Քուշկյան

Կից ներկայացնում ենք «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

Հարգանքով՝ Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության վարչություն
Մ. Սահակյան

ՀՀ Առողջապահության
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
N 2675
01.03.10

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

Օրենքի նախագծի 1-ին հոդվածում «ապրիլի» բառն անհրաժեշտ է փոխարինել «մարտի» բառով: Նույն հոդվածի «նոր մասով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «նոր 4-րդ մասով» բառերով, իսկ «Արտոնյալ» բառից առաջ լրացնել «4.» թիվը՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի:

**«Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

Օրենքի նախագծում «ՀՕ-474» օրենքի թիվն անհրաժտ է փոխարինել «ՀՕ-474-Ն» թվով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի:

**«Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

Օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի կետերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին՝ համաձայն որի օրենքներում կետերը համարակալվում են արաբական թվանշաններով և տեքստից բաժանվում են փակագծերով:

**ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ՝** Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

**Իրավական ակտերի փորձաքննության վարչության պետ՝** Կ. ԽՏՐՅԱՆ